ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԿՈԼԵԳԻԱ

ՈՐՈՇՈՒՄ

26 հուլիսի 2016 թվականի **թիվ 82** քաղ. Մոսկվա

Հում նավթի նկատմամբ Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկում եւ Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագնում փոփոխություններ կատարելու մասին

«Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 42-րդ եւ 45-րդ հոդվածներին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիան **որոշեց**.

1. Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկում եւ Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագնում (Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի հուլիսի 16-ի թիվ 54 որոշման հավելված) կատարել հետեւյալ փոփոխությունները.

ա) Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկից հանել ստորաենթադիրքեր՝ համաձայն թիվ 1 հավելվածի.

բ) Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկում ընդգրկել ստորաենթադիրքեր՝ համաձայն թիվ 2 հավելվածի.

գ) սահմանել Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագնի ներմուծման մաքսատուրքերի դրույքաչափեր՝ համաձայն թիվ 3 հավելվածի.

դ) Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի 8-րդ ծանոթագրության երկրորդ պարբերությունը լրացնել «, Արեւելյան Մեսոյախայի նավթագազակոնդենսատային հանքավայր» բառերով:

2. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 30 օրացուցային օրը լրանալուց հետո:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի
կոլեգիայի նախագահի ժ/պ՝ Կ. Մինասյան

ՀԱՎԵԼՎԱԾ ԹԻՎ 1

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի կոլեգիայի
2016 թվականի հուլիսի 26-ի
թիվ 82 որոշման

ՍՏՈՐԱԵՆԹԱԴԻՐՔԵՐ

Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկից հանվող

ԱՏԳ ԱԱ ծածկագիր	Դիրքի անվանումը	Լրացուցիչ չափման միավորներ
2709 00 900 1	- - հում նավթ՝ 20ºC ջերմաստիճանում 906 կգ/մ³-ից ոչ պակաս, սակայն 967 կգ/մ³-ից ոչ ավելի խտությամբ եւ ծծմբի՝ 1,98% զանգվածային բաժնից ոչ պակաս, սակայն 2,34% զանգվածային բաժնից ոչ ավելի պարունակությամբ	-
2709 00 900 9	- - - այլ	-

ՀԱՎԵԼՎԱԾ ԹԻՎ 2

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի կոլեգիայի
2016 թվականի հուլիսի 26-ի
թիվ 82 որոշման

ՍՏՈՐԱԵՆԹԱԴԻՐՔԵՐ

Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկում ընդգրկվող

	ԱՏԳ ԱԱ ծածկագիր	Դիրքի անվանումը	Լրացուցիչ չափման միավորներ
+	2709 00 900 1	- - հում նավթ՝ 20 ºC ջերմաստիճանում 887,6 կգ/մ³-ից ավելի, սակայն 994 կգ/մ³-ից ոչ ավելի խտությամբ եւ ծծմբի՝ 0,015% զանգվածային բաժնից ոչ պակաս, սակայն 3,47% զանգվածային բաժնից ոչ ավելի պարունակությամբ	-
+	2709 00 900 9	- - - այլ	-

ՀԱՎԵԼՎԱԾ ԹԻՎ 3

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի կոլեգիայի
2016 թվականի հուլիսի 26-ի
թիվ 82 որոշման

ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ

Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագնի ներմուծման մաքսատուրքերի

	ԱՏԳ ԱԱ ծածկագիր	Դիրքի անվանումը	Ներմուծման մաքսատուրքի դրույքաչափ (մաքսային արժեքից տոկոսներով՝ կամ եվրոյով, կամ ԱՄՆ դոլարով)
+	2709 00 900 1	- - հում նավթ՝ 20 ºC ջերմաստիճանում 887,6 կգ/մ³-ից ավելի, սակայն 994 կգ/մ³-ից ոչ ավելի խտությամբ եւ ծծմբի՝ 0,015% զանգվածային բաժնից ոչ պակաս, սակայն 3,47% զանգվածային բաժնից ոչ ավելի պարունակությամբ	0
+	2709 00 900 9	- - - այլ	0

_____